

**Խորհրդարանական վերահսկողության առկա գործիքակազմի
կիրառելիության հիմնահարցերը
Հայաստանի Հանրապետությունում**

Չախայան Արմինե

Հանգուցային բառեր և բառակապակցություններ. խորհրդարան, խորհրդարանական վերահսկողություն, գործիքակազմ, Կառավարություն, պաշտոնատար անձ, պատասխանատվություն, խորհրդարանական հարցուպատասխան, խորհրդարանական հարցում, վստահության հայտնում, քաղաքական ուժ

Նախաբան: Գիտական հոդվածի արդիականությունը պայմանավորված է խորհրդարանական վերահսկողության գործիքակազմի վերաբերյալ իրականացված գիտական ուսումնասիրությունների սակավությամբ: Արդիականությունը հիմնավորող առաջին պատճառը այն է, որ ՀՀ իրավական և դոկտրինալ պրակտիկայում բացված չէ «խորհրդարանական վերահսկողություն» հասկացությունը, առկա չէ հստակ և ուղիղ ձևակերպում: «Ազգային Ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքը չի նախատեսում խորհրդարանական վերահսկողության նպատակները, ինչը նույնպես խոչընդոտում է նրա բովանդակությունը բացահայտելու գործում:

Անդրադառնալով խորհրդարանական վերահսկողությանը, նրա գործիքակազմի վերաբերյալ արտահայտված գիտական մտքերին՝ կարող ենք արձանագրել, որ այստեղ նույնպես առկա չէ միակարծություն:

Երկրորդ պատճառն այն է, որ սույն գիտական հոդվածում դասակարգվել է խորհրդարանական վերահսկողության գործիքակազմը, որի արդյունքում առանձնացվել է. 1) պետական բյուջեի նկատմամբ վերահսկողությունը կամ խորհրդարանական բյուջետային ընթացակարգային և վերջնական վերահսկողությունը, 2) այլ հարցերին առնչվող կամ խորհրդարանական ընթացակարգային վերահսկողությունը, 3) պետական մարմինների զեկույցները, հաղորդումները և հաշվետվությունները շրջանառության մեջ դնելու և քննարկելու հետ կապված վերահսկողությունը կամ խորհրդարանական վերջնական վերահսկողությունը: Խորհրդարանական վերահսկողության գործիքակազմի առանձին տարրերի ուսումնասիրությունը, ինչպիսիք են, օրինակ, ՀՀ Ազգային ժողովի

հետ ՀՀ կառավարության հարցուպատասխանը, խորհրդարանական հարցումը, ՀՀ կառավարության հաշվետվությունը ՀՀ Ազգային ժողովի առջև, թույլ է տվել առանձնացնել խորհրդարանական վերահսկողության առանցքային խնդիրը, այն է՝ պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու մեխանիզմների բացակայությունը, այլ կերպ ասած՝ իրավական սանկցավորման թերի մակարդակը: Որպես օրինակ կարելի է նշել Վարչապետի և/կամ Կառավարության անդամի գործունեության անբավարար գնահատականի դեպքում նրանց պաշտոնից ազատման հնարավորության բացակայությունը, Կառավարության անդամի նիստին չներկայանալու դեպքում նման հնարավորությունը, Կառավարության գործունեության գնահատման մեխանիզմների բացակայությունը:

Արդիականությունը հիմնավորող երրորդ պատճառը այն է, որ սույն գիտական հոդվածում անդրադարձ է կատարվել խորհրդարանական կառավարման ձև ունեցող որոշ երկրներում իրականացվող խորհրդարանական վերահսկողությանը և վեր են հանվել վերջինիս երեք դրսևորումներ՝ որոշումների բացասական հետևանքների կանխարգելումը՝ խորհրդարանի կողմից հավանության չարժանացած գործադիր իշխանության մարմնի կողմից ներկայացված օրինագծի արգելափակումը, Կառավարությանը վստահության հայտնումը և Կառավարության ծրագրին հավանություն տալը:

Սույն հոդվածի գիտական նորույթը այն է, որ. 1) առաջարկվում է «խորհրդարանական վերահսկողություն» հասկացության հստակ սահմանում՝ նշելով, որ «խորհրդարանական վերահսկողությունը իրենից ներկայացնում է պետական վերահսկողության ձև, որը օգտագործելով վերահսկողության սահմանված գործիքակազմը, ուղղված է գործադիր իշխանության մարմիններում ենթադրյալ չարաշահումների և խախտումների բացահայտմանը և վերհանմանը», 2) առաջարկվում են սահմանել խորհրդարանական վերահսկողության նպատակները՝ 23. 04. 2013 թ. «Խորհրդարանական վերահսկողության մասին» ՌԴ դաշնային օրենքի օրինակով, 3) առանձնացվել է խորհրդարանական վերահսկողության առանցքային խնդիրը, այն է՝ վերջինիս շրջանակներում վերհանված հարցերի առնչությամբ պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու մեխանիզմների բացակայությունը, այլ կերպ ասած՝ իրավական սանկցավորման թերի մակարդակը:

Անդրադառնալով «խորհրդարանական վերահսկողություն» հասկացությանը՝ հարկ ենք համարում նշել, որ ՀՀ նորմատիվ-իրավական ակտերում այն չունի հստակ և ուղիղ ձևակերպում: Մասնավորապես, «ՀՀ

ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ, ընդունում է պետական բյուջեն և իրականացնում Սահմանադրությամբ սահմանված այլ գործառույթներ»:

«Խորհրդարանական վերահսկողություն» հասկացության վերաբերյալ գիտական հանրությունը նույնպես համակարծիք չէ: Այսպես, Ա. Ռ. Գիզդատովի պնդմամբ, խորհրդարանական վերահսկողությունը իրենից ներկայացնում է պետական իշխանության օրենսդիր-ներկայացուցչական մարմնի, խորհրդարանականների և մոնիթորինգ իրականացնող համակարգային մարմինների համար գործադիր մարմինների և պաշտոնատար անձանց կողմից իրենց գործառույթների իրականացման օրինականության ստուգման սահմանադրաիրավական հնարավորություն՝ դրանց գործունեության հետագա գնահատականի՝ ազդեցության միջոցների հնարավոր կիրառման համար [3]:

Ավելի տարածական մեկնաբանությամբ է հանդես գալիս Ա. Ս. Զուբարևը, ով «Խորհրդարանական վերահսկողություն» հասկացության տակ հասկանում է օրենսդիր մարմնի կողմից իրականացվող իրավական միջոցների համակարգ, որն ուղղված է օրենքների կիրառմանն առնչվող գործադիր իշխանության մարմինների գործունեության՝ Սահմանադրությանը և օրենսդրությանը համապատասխանության պարզմանը [4]:

Մ. Մ. Ուսոյաշևի և Ա. Ա. Կոռնիլևայի պատկերացմամբ «Խորհրդարանական վերահսկողությունը» իրենից ներկայացնում է պետական իշխանության բարձրագույն օրենսդիր (ներկայացուցչական) մարմնի կողմից՝ համակարգի ստուգմանն ու մշտադիտարկմանը ուղղված միջոցառումների իրականացում, ինչպես նաև ստուգման արդյունքում հայտնաբերված խախտումների վերացում և նոր հնարավոր անհամապատասխանությունների կանխում [8]:

Ս. Վ. Բենդյուրինան, քննարկելով դաշնային խորհրդարանական վերահսկողությունը, եկել է այն եզրակացության, որ այն խորհրդարանի՝ իր սեփական և համատեղ մարմինների, ինչպես նաև առանձին ներկայացուցիչների օրինական գործունեություն է, որը բնութագրվում է որպես իրավաբանական ուղղվածություն ունեցող պետական իշխանության մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից նորմատիվային հանձնարարականների կատարման խախտումների, սխալների և չարաշահումների, ինչպես նաև, որպես հետևանք, ի հայտ եկած կամ չառաջա-

ցող իրավական հետևանքների մոնիտորինգ, հայտնաբերվում և կանխարգելում [1]:

Մ. Ս. Մավչենկոյի և Ե. Ն. Ժիրովայի՝ «խորհրդարանական վերահսկողությանը» վերաբերող գիտական դիրքորոշումը համընկնում է Ս. Վ. Բենդյուրինայի գիտական դիրքորոշման հետ, մասնավորապես, այն հարցում, թե խորհրդարանական վերահսկողության նշանակում է պետական իշխանության մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից, նորմատիվ իրավական ակտերի կիրառման ընթացքում թույլ տված չարաշահումների և խախտումների հայտնաբերումն ու կանխարգելումը [7]:

Ամբողջացնելով խորհրդարանական վերահսկողության վերաբերյալ օրենսդրական բնորոշումը և գիտնականների վերոգրյալ դիրքորոշումները՝ հանգում ենք այն եզրակացությանը, որ խորհրդարանական վերահսկողությունը իրենից ներկայացնում է պետական վերահսկողության ձև, որը, օգտագործելով վերահսկողության սահմանված գործիքակազմը, ուղղված է գործադիր իշխանության մարմիններում ենթադրյալ չարաշահումների և խախտումների բացահայտմանը և վերհանմանը:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «ՀՀ ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում հայտնաբերված չեն խորհրդարանական վերահսկողության նպատակները, ապա մեր կողմից անդրադարձ է կատարվել 23. 04. 2013 թ. ընդունված «Խորհրդարանական վերահսկողության մասին» ՌԴ դաշնային օրենքին, որի 2-րդ հոդվածում սահմանված են խորհրդարանական վերահսկողության հիմնական նպատակները: Հիմք ընդունելով սահմանված նպատակները ՀՀ իրականությանը համապատասխան՝ կարելի է առանձնացնել.

ՀՀ սահմանադրության, ՀՀ սահմանադրական օրենքների և օրենքների կատարման ապահովումը, Սահմանադրությամբ երաշխավորված մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, օրինականության և իրավակարգի ամրացումը, ՀՀ պետական մարմինների գործունեության մեջ տեղ գտած խնդիրների հայտնաբերումը, պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև համապատասխան պետական մարմինների և պաշտոնատար անձանց ուշադրության հրավիրումը այն թերություններին, որոնք ի հայտ են եկել խորհրդարանական վերահսկողության իրականացման ընթացքում՝ դրանց վերացման նպատակով, կոռուպցիայի հակազդումը, ՀՀ օրենսդրության կիրառման պրակտիկայի ուսումնասիրությունը, ՀՀ օրենսդրության կատարելագործմանը ուղղված հանձնա-

րարականների մշակումը և դրա կատարման արդյունավետության բարձրացումը:

Խոսելով խորհրդարանական վերահսկողության նպատակներից, մասնավորապես՝ կոռուպցիայի հակազդումից՝ չի կարելի չանդրադառնալ Մ. Ս. Սավչենկոյի և Ե. Ն. Ժիրովայի այն դիրքորոշմանը, թե «Մերօրյա ժամանակներում մեծ ուշադրություն է դարձվում կոռուպցիայի դեմ պայքարին: Այստեղից ակնհայտ է, որ Ռուսաստանի Դաշնությունում, օրենսդրությամբ ամրագրված, խորհրդարանական վերահսկողության նպատակներից մեկն է կոռուպցիայի հակազդումը: Այս նպատակից ելնելով, հակակոռուպցիոն քաղաքականության ոլորտում կիրառվող խորհրդարանական վերահսկողությանը ներկայացվող հիմնական պահանջն է հանդիսանում կոռուպցիայի հակազդման ոլորտում իրավապահ մարմինների կողմից վարվող գործերի վերլուծությունն ու գնահատումը: Այսպիսով, կոռուպցիայի դեմ պայքարի կարևոր ուղղություններից մեկն է հանդիսանում ներկայացուցչական իշխանության որակի բարձրացումը՝ խորհրդարանական վերահսկողության արդյունավետության բարձրացման միջոցով» [7]:

Վերոնշյալ նպատակներին հասնելու համար «ՀՀ ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով նախատեսված է խորհրդարանական վերահսկողության գործիքակազմ: Խորհրդարանական վերահսկողությանը նվիրված է «ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի բաժին 5-ը՝ «Խորհրդարանական վերահսկողություն» վերտառմամբ: Նշված բաժինը բաղկացած է երեք գլխից. առաջինը՝ Գլուխ 24՝ «Պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողությունը», երկրորդը՝ «Խորհրդարանական վերահսկողությանն առնչվող այլ հարցերի քննարկման կարգեր», երրորդը՝ «Պետական մարմինների զեկույցները, հաղորդումները և հաշվետվությունները»:

ՀՀ-ում խորհրդարանական վերահսկողության **առաջին** միջոցն է պետական բյուջեի նկատմամբ վերահսկողությունը կամ **խորհրդարանական բյուջետային ընթացակարգային և վերջնական վերահսկողությունը**, որը կատարվում է հետևյալ ընթացակարգերով.

- Պետական բյուջեի կատարման ընթացքի մասին ՀՀ Կառավարության կողմից եռամսյակային տեղեկանքների ներկայացում («ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքի 114-րդ հոդվածի 1-ին մաս):
- Պետական բյուջեի կատարման ընթացքի մասին Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացությունների ներկայացում («ԱԺ կանոն-

նակարգ» սահմանադրական օրենքի 115-րդ հոդվածի 1-ին մաս):

- Պետական բյուջեի կատարման ընթացքի մասին ՀՀ Կառավարության կողմից տարեկան տեղեկանքների ներկայացում («ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքի 116-րդ հոդվածի 1-ին մաս):
- Մշտական հանձնաժողովներում պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության նախնական քննարկումներ («ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքի 117-րդ հոդված):
- Ազգային ժողովի նիստում պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության քննարկում («ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքի 118-րդ հոդված):

Խորհրդարանական վերահսկողության **երկրորդ** միջոցը, որը վերաբերում է խորհրդարանական վերահսկողությանն առնչվող այլ հարցերին կամ **խորհրդարանական ընթացակարգային վերահսկողությանը**, կատարվում է հետևյալ ընթացակարգերով.

- Կառավարության անդամներին գրավոր հարցերի ուղղում («ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքի 119-րդ հոդվածի 1-ին մաս):
- Կառավարության անդամներին բանավոր հարցերով դիմում («ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքի 120-րդ հոդված):
- Խմբակցությունների գրավոր հարցապնդումներ («ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքի 121-րդ հոդվածի 1-ին մաս):
- Մշտական հանձնաժողովների խորհրդարանական վերահսկողություն («ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքի 122-րդ հոդված):
- Հասարակական հետաքրքրություն ներկայացնող հրատապ թեմայով քննարկումների անցկացում («ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքի 123-րդ հոդված):
- Պատգամավորների հայտարարություններ («ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքի 124-րդ հոդված):
- Խորհրդարանական լսումներ («ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքի 125-րդ հոդված):

Խորհրդարանական վերահսկողության **երրորդ** միջոցը պետական մարմինների գեկույցները, հաղորդումները և հաշվետվությունները շրջանառության մեջ դնելու և քննարկելու հետ կապված վերահսկողությունը կամ **խորհրդարանական վերջնական վերահսկողությունն է**, որը կատարվում է հետևյալ ընթացակարգերով.

- Կառավարության ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների

մասին տարեկան զեկույցի ներկայացում և քննարկում («ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքի 127-րդ հոդված):

- Գլխավոր դատախազի հաղորդման ներկայացում և քննարկում («ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքի 128-րդ հոդված):
- Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդման ներկայացում և քննարկում («ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքի 129-րդ հոդված):
- Հաշվեքննիչ պալատի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդման ներկայացում և քննարկում («ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքի 130-րդ հոդված):
- Կենտրոնական բանկի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդման ներկայացում և քննարկում («ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքի 131-րդ հոդված):
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեության վերաբերյալ հաղորդման ներկայացում և քննարկում («ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքի 132-րդ հոդված):
- Տեղեկատվության ազատության վիճակի մասին Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի տարեկան հաղորդման ներկայացում և քննարկում («ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքի 133-րդ հոդված):

Սույն հոդվածում ցանկանում ենք քննարկել և ուշադրություն դարձնել խորհրդարանական վերահսկողության այնպիսի մեխանիզմների, ինչպիսիք են՝ ՀՀ Ազգային ժողովի հետ ՀՀ կառավարության հարցուպատասխանը, խորհրդարանական հարցումը, ՀՀ կառավարության հաշվետվողականությունը ՀՀ Ազգային ժողովի առջև՝ անդրադարձ կատարելով խորհրդարանական վերահսկողության արդյունավետությանը, փոխկապակցելով այն ՀՀ կառավարության պաշտոնատար անձանց պատասխանատվության և խորհրդարանական քննության մեխանիզմների կատարելագործման հետ:

Հարկ ենք համարում նշել, որ ՀՀ Ազգային ժողովի և ՀՀ կառավարության փոխգործակցության սահմանադրաիրավական հիմքն է ՀՀ սահմանադրության 4-րդ հոդվածով նախատեսված՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը: Ըստ այդ սկզբունքի՝ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա, ինչի շրջանակնե-

րում ՀՀ Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում ՀՀ կառավարության գործունեության նկատմամբ:

Լ. Ա. Նուդենկոյի և Լ. Ա. Թխաբխիսիմովայի անդամք՝ խորհրդարանական վերահսկողության նշված ձևի վերլուծությունը մատնանշում է նրա բավականին թույլ արդյունավետությունը, որը հեղինակները կապում են Կառավարության անդամի նիստին չներկայանալու հնարավորությամբ, ինչը թույլ է տալիս վերջինիս խուսափել անձնական պատասխանատվությունից՝ իր փոխարեն ուղարկելով իրեն փոխարինող անձին: Հեղինակները նշում են, որ Ռուսաստանի Դաշնությունում 2007 թվականից Դաշնային Խորհրդի կանոնակարգով սահմանված է ՌԴ Կառավարության ղեկավարի այց խորհրդարան ոչ ուշ, քան տարին մեկ անգամ՝ խորհրդարանական ժամի շրջանակներում, սակայն ՌԴ Կառավարության ղեկավարը այդպես էլ նման այց չի ունեցել: Հեղինակները ուշադրություն են դարձնում այն հանգամանքին, որ եթե նույնիսկ նրա գործունեության արդյունքները խորհրդարանի կողմից ճանաչվեն ոչ բավարար, ապա խորհրդարանը չունի բավարարչափ իրավական լծակներ նրան պաշտոնից ազատելու համար, այլ կարող է դիմել ՌԴ նախագահին, խորհրդարանական հարցման մասին որոշում կայացնելու նպատակով, վերջինս էլ կարող է ընդունել ստացված տեղեկատվությունն ի գիտություն կամ տալ հանձնարարականներ [6]:

«ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 152-րդ հոդվածի 1-2 մասերի համաձայն. «1. Վարչապետին անվստահություն կարելի է հայտնել նրա նշանակումից ոչ շուտ, քան մեկ տարի հետո: 2. Արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ վարչապետին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ չի կարող ներկայացվել կամ քննարկվել»:

«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. Վարչապետը պարտավոր է հրաժարական ներկայացնել հետևյալ դեպքերում. 1) նա կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կամ ձեռք է բերել այլ պետության քաղաքացիություն, 2) նա խախտել է սույն օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները:

Սույն իրավադրույթներից երևում է, որ խորհրդարանի կողմից նրա գործունեության ոչ բավարար գնահատումը հիմք չէ նրան զբաղեցված պաշտոնից ազատելու համար: Վերհանված խնդրի շուրջ առաջարկում ենք նախատեսել վարչապետի և/կամ Կառավարության անդամի պաշտո-

նից ազատման հնարավորություն՝ գործունեության անբավարար գնահատականի դեպքում:

Խորհրդարանական վերահսկողության հաջորդ քննարկվող միջոցառումը խորհրդարանական հարցումն է: Խորհրդարանական հարցումների ցածր արդյունավետությունը պայմանավորված է նրանով, որ գործադիր մարմնի պաշտոնատար անձինք կամ արհամարհում են հարցումը, կամ պատասխանում են ոչ ամբողջությամբ, կամ պատասխանում են ձևական և անբովանդակ: Խնդրահարույցն այն հանգամանքն է, որ չկա դրա համար պատասխանատվություն նախատեսող նորմ և անբավարար արդյունքի դեպքում խորհրդարանական հարցումը պետք է ուղարկել կրկին: Ինչպես նշում է Օ. Ի. Վասիլևան, եթե պաշտոնատար անձինք խախտում են պատասխան ներկայացնելու ժամկետները, խուսափում են տեղեկատվություն տրամադրելուց կամ տրամադրում են կեղծ տեղեկատվություն, ապա Քրեական օրենսգրքով և Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված պատասխանատվության միջոցները նրանց հանդեպ չեն կիրառվում [2]:

Ցանկանում ենք նշել նաև, որ, մեր կարծիքով, արդյունավետության ցածր մակարդակ ունի խորհրդարանական վերահսկողությունը՝ ՀՀ Ազգային ժողովի առջև ՀՀ կառավարության գործունեության մասին տարեկան հաշվետվության մասով, քանի որ վերջինս չի կարող կիրառել Կառավարության նկատմամբ կոնկրետ սանկցիաներ՝ հաշվետվությունը հավանության չարժանանալու դեպքում: Ա. Վ. Չեպուսի պնդմամբ, Կառավարության հաշվետվությանը առաջադրվող պահանջները նորմավորեն սահմանված չեն [9], ինչը թույլ կտա գործադիր մարմնին չներառել հաշվետվությունում այնպիսի հանգամանքներ, որոնք վերջինիս ձեռնտու չեն լինի:

Խորհրդարանական վերահսկողության գործիքակազմի բազմակողմանի ուսումնասիրության նպատակով հարկ ենք համարում անդրադարձ կատարել նաև խորհրդարանական կառավարման ձև ունեցող երկրներում իրականացվող խորհրդարանական վերահսկողությանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շուրջ 140 երկիր ընտրել է խորհրդարանական կառավարման ձև, որից ավելի քան 10 երկրները համարվում են դաշնային հանրապետություններ [5], առավել քան հետաքրքիր է դառնում այդ երկրներում խորհրդարանական վերահսկողության ինչպես տեսական ամրագրման, այնպես էլ գործնականում դրա իրականացման արդյունավետության ուսումնասիրությունը:

Իրենից հետաքրքրություն է ներկայացնում խորհրդարանական վերահսկողության նախնական ձևը, որը կայանում է գործադիր իշխանության մարմինների կողմից կայացված որոշումների բացասական հետևանքների կանխարգելման, Կառավարությանը վստահություն հայտնելու և Կառավարության ծրագրին հավանություն տալու մեջ: Որպես օրինակ կարող ենք դիտարկել խորհրդարանի կողմից հավանության չարժանացած գործադիր իշխանության մարմնի կողմից ներկայացված օրինագծի արգելափակումը: Նշենք, որ գործնականում այն իրականացվում է գործադիր իշխանության կոլեկտիվ պատասխանությամբ, մասնավորապես՝ Կառավարության քաղաքական ուղեգծին հավանություն չտալու դեպքում խորհրդարանի կողմից անվստահություն է հայտնվում Կառավարության ամբողջ կազմին: Այսպես. Իսպանիայի սահմանադրության 108-րդ հոդվածի համաձայն, Կառավարությունը՝ Կոնգրեսի պատգամավորների առջև, կրում է համապարտ պատասխանատվություն իր քաղաքական գործունեության համար:

Բավականին մեծ հետաքրքրություն են ներկայացնում Չեխիայի, Իտալիայի և Սլովակիայի սահմանադրական կարգավորումները, ըստ որոնց, խորհրդարանական վերահսկողությունը իրականացվում է՝ նորաստեղծ Կառավարության կողմից խորհրդարան վստահության մասին հարցում ուղարկելով: Չեխիայի Հանրապետության սահմանադրության 68-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, ոչ ուշ, քան Կառավարության կազմավորման 30-րդ օրը, այն պետք է կանգնի խորհրդարանի առջև և խնդրի վստահություն հայտնել: Իտալիայի սահմանադրության 94-րդ հոդվածի համաձայն՝ Կառավարությունը ոչ ուշ, քան կազմավորման 10-րդ օրը, պետք է ներկայանա խորհրդարան՝ պալատների կողմից վստահություն ստանալու համար: Սլովակիայի սահմանադրության 113-րդ հոդվածի համաձայն՝ Կառավարությունը պարտավոր է իր նշանակումից հետո 30-օրյա ժակետում կանգնել Սլովակիայի Հանրապետության Ազգային խորհրդի առջև՝ առաջարկելով իր ծրագիրը և խնդրելով վստահության հայտնում:

Հայաստանի Հանրապետությունում կառավարության վստահության հայտնումը և ՀՀ կառավարության ծրագրի ներկայացումը իրականանում են առանձին և միմյանց հետ փոխկապակցված չեն: Մասնավորապես, Սահմանադրության 151-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կառավարության կազմավորումից հետո՝ քանօրյա ժամկետում, վարչապետն Ազգային ժողով է ներկայացնում Կառավարության ծրագիրը: Սահմանադրության 157-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կառավարությունն իր

ներկայացրած օրենքի նախագծի ընդունման առնչությամբ կարող է դնել իր վստահության հարցը: Կառավարությանը վստահություն հայտնելու մասին որոշման նախագիծը քվեարկության է դրվում այն ներկայացվելուց ոչ ուշ, քան յոթանասուներկու ժամվա ընթացքում: Որոշումն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ անվանական քվեարկությամբ:

Եզրակացություն: Ամփոփելով գիտական հոդվածի արդյունքները՝ ցանկանում ենք արձանագրել հետևյալը.

1. Խորհրդարանական վերահսկողությունը իրենից ներկայացնում է պետական վերահսկողության ձև, որը, օգտագործելով վերահսկողության սահմանված գործիքակազմ, ուղղված է գործադիր իշխանության մարմիններում ենթադրյալ չարաշահումների և խախտումների բացահայտմանը և վերհանմանը:
2. Առանձնացված են խորհրդարանական վերահսկողության միջոցների առնվազն 3 խմբեր, այն է՝ խորհրդարանական բյուջետային ընթացակարգային և վերջնական վերահսկողությունը, խորհրդարանական ընթացակարգային վերահսկողությանը, խորհրդարանական վերջնական վերահսկողությունը:
3. Առկա է խորհրդարանական վերահսկողության միջոցների իրավական սանկցավորման ցածր մակարդակ:
4. Միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում վեր է հանվել նախնական խորհրդարանական վերահսկողություն, որը գործադիր իշխանության մարմինների կողմից կայացված որոշումների բացասական հետևանքների կանխարգելումը, Կառավարությանը վստահություն հայտնելը և Կառավարության ծրագրին հավանություն տալն է:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ առաջարկում ենք. 1) «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացնել խորհրդարանական վերահսկողության սահմանումը և սույն գիտական հոդվածում մատնանշված նպատակները, 2) նախատեսել Վարչապետի և/կամ Կառավարության անդամի պաշտոնից ազատման հնարավորությունը՝ նրա գործունեության անբավարար գնահատականի դեպքում, ինչպես նաև սահմանել Կառավարության գործունեության գնահատման հստակ չափանիշներ և դրանք կիրառելու համապատասխան մեխանիզմներ, 3) «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում նախատեսել իրավապահ մարմինների հետ համագործակցության ընթացակարգ:

Գրականություն

1. ՀՀ Սահմանադրություն URL: <https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510> (հասանելիություն: 09.08.2022):
2. «ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենք URL: <https://www.arlis.am/documentview.aspx?docid=169105> (հասանելիություն: 09.08.2022):
3. Бендюрина С. В. Федеральный парламентский контроль в Российской Федерации: конституционно-правовое исследование [Электронный ресурс], <https://www.dissercat.com/content/federalnyi-parlamentskii-kontrol-v-rossiiskoi-federatsii-konstitutsionno-pravovoe-issledovan> (дата обращения: 09.08.2022).
4. Васильева О. И. Парламентский запрос как форма парламентского контроля [Электронный ресурс], <https://elibrary.ru/item.asp?id=21484145> (дата обращения: 09.08.2022).
5. Гиздатов А. Р. Сущность и формы парламентского контроля в Российской Федерации [Электронный ресурс], <https://cyberleninka.ru/article/n/suschnost-i-formy-parlamentskogo-kontrolya-v-rossiyskoy-federatsii> (дата обращения: 06.08.2022).
6. Зубарев А.С. К вопросу об аутентичном толковании понятия "парламентский контроль" [Электронный ресурс], <https://www.elibrary.ru/contents.asp?id=33820095&selid=18830529> (дата обращения: 09.08.2022) .
7. Каримова Г.Ю. Институт парламентского контроля в зарубежных странах [Электронный ресурс], <https://cyberleninka.ru/article/n/institut-parlamentskogo-kontrolya-v-zarubezhnyh-stranah> (дата обращения: 10.08.2022).
8. Нудненко Л.А., Тхабисимова Л.А. Конституционные основы парламентского контроля деятельности Правительства Российской Федерации, <https://cyberleninka.ru/article/n/konstitutsionnye-osnovy-parlamentskogo-kontrolya-za-deyatelnostyu-pravitelstva-rossiyskoy-federatsii> (дата обращения: 09.08.2022).
9. Савченко Марина Станиславовна, Жирова Елена Николаевна Парламентский контроль: понятие и назначение [Электронный ресурс], <https://cyberleninka.ru/article/n/parlamentskiy-kontrol-ponyatie-i>

- paznachenie (дата обращения: 06.08.2022).
10. Утяшев М. М. Контрольные функции региональных парламентов: сравнительный анализ [Электронный ресурс], https://nbpublish.com/library_read_article.php?id=-311 (дата обращения: 06.08.2022).
 11. Чепус А. В. Парламентский финансовый контроль в отношении Правительства Российской Федерации, <https://cyberleninka.ru/article/n/parlamentskiy-finansovyy-kontrol-v-otnoshenii-pravitelstva-rossiyskoy-federatsii> (дата обращения: 11.10.2022).

Основные вопросы применения имеющихся инструментов парламентского контроля в республике Армения

Чахалян Арmine

Резюме

***Ключевые слова:** парламент, парламентский контроль, инструментарий, правительство, должностное лицо, ответственность, парламентский вопрос-ответ, парламентский запрос, выражение доверия, политическая сила*

В данной научной статье обсуждается научная характеристика «Парламентского контроля», а также представляется его классификация. В частности, определены 3 группы мер парламентского контроля - промежуточный и конечный бюджетный парламентский контроль; промежуточный парламентский контроль; конечный парламентский контроль.

В рамках научной статьи освящаются проблемы конституционно-правовой ответственности должностных лиц органов исполнительной власти. При этом, обращается внимание на эффективность парламентского контроля, связывая ее с совершенствованием механизмов ответственности должностных лиц Правительства РА в рамках вопроса-ответа между Правительством РА и Национальным Собранием РА, парламентского запроса, отчетности Правительства РА перед Национальным Собранием РА. Изучается международный опыт по части предварительного парламентского контроля, который включает в себя превенцию отрицательных

последствий решений, принятых органами исполнительной власти, выражение доверия Правительству и одобрение программы Правительства.

По результатам научной статьи, нами были сделаны следующие выводы: во-первых, парламентский контроль представляет собой форму государственного контроля, который используя установленный инструментарий, направлен на выявление и устранение возможных злоупотреблений и нарушений в органах исполнительной власти. Во-вторых, разграничены, как минимум, 3 группы мер парламентского контроля. В-третьих, имеет место быть проблема низкого уровня правовой санкционированности механизмов парламентского контроля. В-четвертых, в результате изучения международного опыта выявлен предварительный парламентский контроль, заключающийся в превенции отрицательных последствий решений, принятых органами исполнительной власти, выражение доверия Правительству и одобрение программы Правительства.

На основании проведенного исследования предложено внести ряд дополнений в конституционный закон РА «Регламент Национального Собрания».

Basic Issues of the Applicability of the Existing Instrumentation of Parliamentary Control in the Republic of Armenia

Chakhalyan Armine

Summary

Key words: *parliament, parliamentary control, tools, government, official, responsibility, parliamentary question-answer, parliamentary request, expression of confidence, political force*

In this article the scientific characteristics of “Parliamentary control” are discussed. The article also presents its classification and in particular, 3 groups of parliamentary control measures: intermediate and final budgetary parliamentary control; intermediate parliamentary control; ultimate parliamentary control.

Within the framework of the scientific article, the problems of the constitutional and legal responsibility of officials of the executive authorities are consecrated. At the same time, attention is drawn to the effectiveness of parliamentary control, linking it to the improvement of the mechanisms for the

RA Government officials' responsibility in the framework of the question-answer between the RA Government and the RA National Assembly, the parliamentary request, the reporting of the RA Government to the National RA Assembly. International experience is being researched in terms of preliminary parliamentary control, which includes the prevention of negative consequences from the decisions made by executive authorities, the expression of confidence in the government and approval for the government's program.

Based on the results of the scientific article, we draw the following conclusions: firstly, parliamentary control is a form of state control, which, using the established tools, is aimed at identifying and eliminating possible violations among the executive authorities. Secondly, at least 3 groups of parliamentary control are distinguished. Thirdly, there is a problem connected with a low level of legal sanctioning for the mechanisms of parliamentary control. Fourthly, after the study of international experience, preliminary parliamentary control was revealed, which consists in preventing the negative consequences of decisions taken by executive authorities, expressing confidence in the government and approving the government program.

It was proposed to introduce a number of additions to the RA constitutional law "Rules of Procedure of the National Assembly".

Ներկայացվել է 14.10.2022 թ.
Գրախոսվել է 02.11.2022 թ.
Ընդունվել է սպագրության 25.11.2022 թ.